

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, լրացնելու համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաղաղապար բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1894 ԹԻԱԿԱՆԻՆ

22-րդ ՏԱՐԻ

22-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՈՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զինքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ: Մենք ստանում ենք սեփական ՀԱՌԱԳՐՈՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը՝ 6 ռուբլի, ամսական՝ 1 ռուբլի: Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՍՏԱԳՐԱՏԱՆԸ (Բազմաթիւ և Բարձրագոյն փողոցների անկիւնում):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գրել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Ներկայ 1893 թվի նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի վերջը «Մշակին» բաժանորդ գրվողները պէտք է վճարեն 2 ռուբլի:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ո՛վ է մեղաւոր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դարաբաղի թեմական դպրոցի հոգաբարձութեան մասին. Հայոց թատրոն. Ներքին լուրեր.—ԱՍՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խնայող ևն դատարան. Խաղաղի ճգնաժամը. Թիւրքաց լրտեսները քաղաքագործութիւններէն. Սանասարեան դպրոցի վրձակը. Նամակ Թիւրքից. Արտաքին լուրեր.—ԽԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՐՈՒԳՐՈՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԻԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բնֆորմների խնդրեր:

Ո՛Վ Է ՄԵՂԱՒՈՐԸ

Բոլոր հասարակական գիտութիւնների, բարոյական փիլիսոփայական սիրտեմների նպատակէն է մարդկային կեանքը լայն հասկացողութեամբ: Իսկ մի սրբութիւն է, մի հիմնական սկզբունք է, որի շուրջը

պտտում են գիտութիւնները: Պահպանել այդ կեանքը ֆիզիկական—ահա առաջին հիմքը բոլոր ծրագրերների. զարգացնել բարոյական բարձրացնել նրան—ահա միտական նպատակը համայն քաղաքակրթութեան:

Այն դէպքերում, երբ վտանգ է սպառնում մարդու ֆիզիկական կեանքին, առժամանակ դարձար են առնում ուրիշ խնդիրներ և բոլոր հոգս ու ջիւղը դարձադրում է այն բանի վրայ, որ մարդկանց ազատեն կորստից, մահէից:

Երբ խոցեալն տարածվեց մեր երկրում և համաճարակին սկսեցին զոհ գնալ բազմաթիւ մարդիկ, կառավարութեան և հասարակութեան ուղղութիւնը կենտրոնացաւ այդ աղէտի դէմ մղուած գործի վրայ:

Երբ երաշտը, խորշակահալը և առհասարակ

լակ անբերրութիւնը, ճարակելով Ռուսաստանի տանկեալ գաւառները, առաջ բերին հացի թանձրութիւն և սով, կառավարութիւնը իր բոլոր օրգաններով, բարեգործական և այլ հաստատութիւնները միլիոններ տուին թեթեւացնելու սովեալների վիճակը, ազատելու քաղցածներին մահի ճիրաններից:

Եւ թէ մեռնողներ լինէին այնպիսի դէպքերում, երբ մարդիկ կարող էին օգնութեան հասնել—մեծ յանցանք գործված կը լինէր մարդկութեան առաջ:

Մարդկային կեանքը էժան է կարելի ծախել, նրան էլ կարելի մահաբեր վտանգների ենթարկել, երբ անհատը հանդիսանում է իբրեւ շատերից մէկը իբրեւ մարդկութեան անդամներից մէկը:

Երբ լրացում կարգում ենք թէ երկաթուղու գնացքը խորտակվեց, այս կամ այն շրջեակը կու գնաց Ծովի ալիքների մէջ, թատրոնն այրվեց կամ փուլ եկաւ, առաջին հարցն այն է լինում թէ արդեօք չե՞ն վնասվել մարդիկ, իսկ երկրորդը այն թէ արդեօք ձեռնհաս վարչութիւնները և դեկլարաները մեղաւոր չե՞ն այդ գործում:

Ուրիշ բան է, երբ դիցուք երկաթաբեր անասանի կերպով թաղում է մարդկանց հողակոյտների տակ, զննացնում է ամբողջ գիւղեր, երկրի հետ հաւասարեցնում է մի բազմամարդ Արդի կամ Բուշան—մենք ոչինչ չունենք ասելու դրա դէմ, որովհետեւ այդտեղ վտանգի առաջն առնելը վեր է մեր նկատմանը: Իսկ երբ դիցուք վանքի տաշեղի կամուրջը քորհնէքին փուլ է գալիս և անմեղ աղօթողներին խեղդում է ջրի մէջ—այդտեղ մարդկային կատաղութիւնը հասնում է իր գագաթնակէտին, որովհետեւ այդտեղ վտանգը անխուսափելի է, որովհետեւ մեզինք իւրաքանչիւրը լաւ գիտում է, որ յանցաւոր անփութութիւնը և

աննրբելի թեթեամտութիւնը վտանգի են ենթարկել մարդկանց կեանքը և դժոխային խաղ խաղացել նրա հետ:

Նոյնպէս երբ քննութիւնը ցոյց է տալիս, որ երկաթուղու գնացքի կամ շրջեակի խորտակման պատճառը եղել են ոչ թէ անսպասելի պատահարներ, այլ վարպետների կամ ղեկավարների անփութութիւնը, հարեւա՞ծ լինելը կամ թեթեամտութիւնը—այն ժամանակ մենք հանդիստ մնալ չենք կարող, որովհետեւ մենք հասարակութեան անդամներն ենք մեղաւոր, որ անհմուտ, անձեռնհաս անձերին ենք յանձնել հարկաւոր, հազարաւոր մարդկանց վիճակը:

Այդտեղ մարդու կորուստը հետեանք է մեր անհոգութեան, մեր անցաւորութեան: Նոյն ժամանակ մենք անմիջապէս, սակայն բարոյական մեղաւորութեան մի մասը ընկնում է մեզ վրա:

Նոյն ժամանակ կատարվում, երբ մենք բարձի թողի ենք անուճ ժողովրդական բարեկեցութեան և առողջապահութեան խնդիրները, երբ թոյլ ենք տալիս, որ կամայ կամայ կորուսեն, ամբարվեն անբարեխաղ պայմաններ, որոնց հետեանք պէտք է լինեն մահաբեր դրութիւն, սով, հիւանդութիւններ:

Այս վերջին բառերին, դժբաղդաբար, մենք սկսում ենք ընտելանալ: Մտաւոր և բարոյական առաջադիմութեան քարոզները ստուգում են մեր բերաններում, երբ ժողովրդական հացի կարիքը բաղխում է մեր դռները:

Լրագիրներում կարգում ենք սարսափելի պատկերներ ֆոքը-Ասիայում տիրող թանձրութեան և սովի մասին: Շուտաւաճ ժողովուրդը թողնում է հայրենի օջախը և լքափառում այս ու այն կողմ հաց մուրալու: Ինչո՞ւ է պատահել, մի-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ի Ե Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ի Խ Ն Դ Ի Ր Ը

Թիւրքաց Հայաստանի բնֆորմների մասին մի քանի ծրագրեր են եղել կազմված: Դրանցից մինն է յայտնի՝ Նուբար-փաշայի ծրագիրը, որը սուլթանից առաջին անգամ 1880 թվին, Կ. Պոլսում, այս վերնագրով. «Quelques indications sur les réformes à introduire dans l'administration de l'Arménie»: «Մշակ» անցեալ համարներից մինում յիշատակվեց Նուբար փաշայի այդ վերին անտիճանի շարժաւոր ծրագրի մասին: Այժմ առաջ ենք բերում այդ ծրագիրը, թարգմանելով ֆրանսերէնից:

«Եւրոպայի պետութիւնները, որոնք ցանկանում են հաստատել Արեւելքում իրենի մի այնպիսի կարգ, որ յարաբերութեան պայմաններ ներկայացնէր Բալկանեան գաւառների մէջ, իրանց հայեացքը գցել են ֆոքը-Ասիայի այն մասի վրա, որ հայ ցեղի որսան է: Բարձր Գուռը ինքն զգացել է կարեւորութիւնը իր թողնելու այդ ճարտարագործ, աշխատատեղ և իմացական աղբուրներ իր այժմեան թշուառ վիճակի մէջ, հեռու Եւրոպայից և նրա ներկայացուցիչներից: Անօգուտ է այստեղ խօսել այն հայերի վիճակի մասին, որոնք երբեք չեն թողել իրանց հայրենիքը. անօգուտ է մանաւանդ քաղաքներ այդ վիճակի նրանց այն հազարաւոր հայրենակիցների վրձակի հետ, որոնք ապրում են Անդրկովկասում: Բարձր Գուռը հէնց նրանով, որ Ս. Ստեփանայի նախնական դաշնագրի մէջ պայմանաւորվել է հայերի կառավարութեան գործում բարենորոգութիւններ մտցնելու, հէնց նրանով, որ նա պարտաւորութիւն է յանձն առել պաշտպանելու այդ ժողովուրդը քիւրդերի դէմ, արդեն ինքն վաւերացրել և խտտողական է այն հանգամանքը, թէ հա-

յերը հեծում են յոռի կառավարութեան ներքոյ և նրանք բոլորովն թողված են քրդական վայրերի հրտաւիրների կամբերին:

«Հայերը երբեք նպատակ չունեն քաղաքական գոյութիւն, քաղաքական անկախութիւն ձեռք բերել. նրանք խնդրում են քաղաքացիական ազատութիւններ, իրանց սպասուկութիւնը, իրանց գոյքը, իրանց կանանց և աղջկանց պատիւը և վերջապէս իրանց կեանքի իրաւունքը երաշխաւորող հաստատութիւններ:

«Եթէ այդ քաղաքացիական ազատութիւնները, որոնք դեռ Գիւլիսանէի խաթաւ-Շէրիֆի միջոցով հուշակված և յաջորդ ֆիրմաններով վերահաստատված են, իրականացան գործադրված լինէին, այդ աշխատատեղ հայ ցեղը վաղուց ի վեր փախած կը լինէր իր երկրի կերպարանքը: (Ռուս-հայկական երեսն նահանգի ազգաբնակչութիւնը կրկնապատկվել է 30 տարվայ ընթացքում):

«Հայ ազգը խորապէս գնահատում է նորին վերահաստատութեան սուլթանի և նրա փառապանդ նախարարների վերանորոգութիւնները: Եթէ այդ դիտաւորութիւնները ապագային են մնացել իրանց համար, եթէ հրամայված վերանորոգութիւնները մեռած տառ են մնացել, պատճառն այն է, որ այդ վերանորոգութիւնների գործադրութիւնը յանձնվել է պաշտօնեաների մի այնպիսի դասակարգի, որ չէ կարողացել ըմբռնել նրանց նպատակը, որ չէ զգացել նրանց կարեւորութիւնը, կամ հակառակ է եղել նրանց կրօնական համոզմունքներով և կամ անձնական շահերով:

«Ինչ և լինի սակայն այն վերանորոգութիւնների ընտրութիւնը, որ մեծ պետութիւնները պարտաւոր են կարծում իրանց շնորհիւ այդ իմացական ցեղին, որ բնական միջոցով է արեւելքի և արեւմուտքի մէջ, առաջինը չը մոռանալու պայման, առանց որի ամեն վերանորոգութիւնը դուր կանցնի, անձնաւորութիւնների և այդ վերանորոգութիւններն իրագործելու կոչված պաշտո-

նաների ընտրութիւնն է: Արդ, որովհետեւ պաշտօնեաները ընտրվում են մի մասնաւոր և առանձնաշնորհալ դասակարգից, ուստի նոր հաստատութիւնների աջողութեան էական պայմանը կայանում է նրանում, որ ընդհանուր կառավարիչը (gouverneur-général) նշանակվի պաշտօնեաների մի ուրիշ կարգից, այսինքն քրիստոնեաներից և որովհետեւ խնդիրը Հայաստանի մասին է, ընդհանուր կառավարիչը հայ լինի:

«Ինչ և լինի այդ բարձրաստիճան պաշտօնեայի ազգայնութիւնը կամ բարոյականութիւնը, անմոտելիւ կը լինի կարծել, որ նա կարող է լրջաբար անձնատուր լինել եռանդուն գործունէութեան, եթէ նա ամեն բոլոր անակնկալ արձակվելու երկիւղի տակ լինի—Ահա՛միտա սուլթանը իր գահակալութեան ճառի մէջ մասնացոյց է արել, իբրեւ կայսրութեան կարիքների սկզբապատճառներից միւր, այն հնչողութեան վրա, որով պաշտօնեաները նշանակվում և արձակվում են: Նորին կայսրական մեծութիւնը, իր հպատակների օգտի համար, կարող էր շնորհել իր հայկական նահանգներին մի ընդհանուր կառավարիչ, որի պաշտօնավարութիւնը եօթ տարվայ շրջանով ապահոված լինէր:

«Ընդհանուր կառավարիչ ընտրութիւնը ամեն վերանորոգութեան, ամեն բարեփոխման առաջին պայմանը լինելով, մեծ պետութիւնները, Ս. Ստեփանոսի նախնական պայմանագրի գործութեամբ (յօդ. 16) և հետագայ, առանց հարուստեւու սուլթանի դերբիխանական հեղինակութիւնը, կարող են նպաստել այդ ընտրութեան իրանց յօժարութեամբ, ինչպէս այդ գործադրում է Լիբանանի կառավարիչ նշանակման ժամանակ և այդպիսով կարող են այդ նշանակումն բոլոր ցանկալի երաշխաւորութիւններով շրջապատել:

«Այդ պայմանների մէջ ընտրված ընդհանուր կառավարիչը՝ ունենալով վերահաստատութեան յանձնարարութիւն հսկելու բարենորոգումների

գործադրութեան վրա, պէտք է լիազօր իշխանութիւն տրվի նրան՝ այդ գործը դրուել բերելու իր անձնաւոր պատասխանատուութեամբ:

«Բայց որոնք են այդ վերանորոգութիւնները և բարեփոխումները: Հայ ազգը կարծում է, որ հեշտ է ցոյց տալ նրանց, եթէ չարիքների աղբիւրները մի առ մի որոշվեն:

«Առաջինը, անշուշտ, քիւրդերի աւարառութիւնները և հարստահարութիւններն են: Պէտք է զսպել նրանց հրտաւիրները: Մինչև այժմ այդ չեն արել, թէ և զօրքի հրամանատարների համար դրանից աւելի էլ հեշտ բան չը կար. ուստի նրանք կամ միջոց չեն ունեցել, կամ կարել: Ազգաբնակչութեան ապահովութիւնը որ և է վտանգի տակ չը դնելու համար, միթէ աւելի լաւ չէր լինի, միթէ խելօք հեռաւորութիւն չէր լինի հէնց իրանց յանձնել ինքնապաշտպանութեան հոգսը: Քրիստոնեայ թէ մահմետական, միթէ նրանց առաջին կարիքը ապահովութիւնը չէ:

«Ընդհանուր կառավարիչն ուրեմն պէտք է իշխանութիւն տալ կազմակերպել ժանդարմերայի մի խումբ, որի պաշտօնը պէտք է լինի ոստիկանութիւնը և երկրի պաշտպանութիւնը հասարակական խաղաղութիւնը վրդովեցնողների դէմ: Այդ խումբը կը կազմվի խառն՝ մուսուլմաններից և քրիստոնեաներից, որոնց կարելի է զինուորագրել առաջուց որոշված մի սխտէմի համեմատ: Այդ խմբի համար պիտեւ նշանակել վերապահված կը լինի ընդհանուր կառավարիչն, որովհետեւ նա է պատասխանատու սուլթանի առաջ՝ նահանգի խաղաղութեան և բարեկարգութեան համար: Մահմետական և քրիստոնեայ տարբեր ի մի ժողովելը՝ մի կազմակերպած մարմնի մէջ, որի նպատակն է երկրի ընդհանուր պաշտպանութիւնը և ապահովութիւնը, կարող է մատենել միմեանց այդ երկու տարրերը:

(Կը շարունակվի)

Թէ՛ այնքան աղքատացել է, որ ոչ մի պաշար չէ թողել տանը. միթէ՛ երկրի կառավարութիւնը հոգ չէ տանում, որ ուրիշ տեղերից հաց ներմուծվի երկրի մէջ:

Գժարադատը, այս դրութիւնը այն հազուագիւտ արհաւիրքներից չէ, որ միայն երբեմնային արձանագրվում են պատմութեան էջերում, իբրեւ ժամանակակից պայմաններից այս կամ այն երկրորդ: Այս դրութիւնը սկսել է իր կրկնութիւնները ունենալ և բաւական յաճախ:

Ո՞ր է մեղաւորը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱՐԱՎԻ ԹԵՄԱԿՍԵՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1836 թվին Բարձրագոյն հաստատած «Պօթէ-նիէյի» դրութեամբ հայերը Ռուսաստանում իրաւունք ստացան իւրաքանչիւր թեմում և էջմիածնի վանքում ունենալ մի մի սեմինարիա կամ թեմական դպրոց (Семейные школы): Ռուսաստանի վեց թեմերից միմիայն Բաքու-բայի, Թիֆլիսի, Երևանի և Ղազարաղի թեմերն են իրաւորւել այդ:

Մինչև 60-ական թվականները մեր թեմական դպրոցների կառավարութիւնը եղել է կոնսիստորիաների անմիջական իշխանութեան ներքոյ, որ նոյն է թէ առաջնորդների և փոխանորդների, որոնք ինքեւ կոնսիստորիայի անդամներ նշանակելը կախված է վիճակաւոր եպիսկոպոսներից: Այդ չընկնող դպրոցների դրութիւնը ողորմելի էր և Մատթէոս կաթողիկոսը այդ դպրոցների թէ նիւթական և թէ մտաւոր-բարոյական դրութիւնը բարձրացնելու համար ժողովրդին մանասկից արուստը կառավարելու գործում, հաստատելով հոգաբարձ-ձուլութիւններ: Այնուհետև վիճակաւոր եպիսկոպոսներին մնաց միմիայն թեմական դպրոցների գործերում հոգաբարձական նիւստերի նախագահելու իրաւունքը:

Հոգաբարձական մարմինը հաստատվելուց յետոյ, մեր թեմական դպրոցները մտնում են իրանց զարգացման երկրորդ շրջանը. նրանք ստանում են որոշ կանոնադրութիւններ և այդ դպրոցներում, յայտնի չափով, վերջ է դնում անձնիշխան կամ մայրկանոնութիւններին:

Սոս 35 տարի է անցել Մատթէոս կաթողիկոսի մոյցած կարգ ու կանոններից յետոյ, և, ի հարկէ, նրա հաստատած կանոնադրութիւնները, ինչպէս և մեր թեմական դպրոցների այժման ծրագրերը՝ ժամանակակից պահանջներին համեմատ փոփոխութիւններ են կարոտ: Բայց քանի որ չը կան նոր կանոններ, հասկանալի է, որ հինգ միում է ոյժի մէջ և այն, ինչ հաստատված է բարձրագոյն հոգեւոր իշխանութիւնից՝ կաթողիկոսից և սինոդից՝ չէ կարող փոփոխվել կամ դադարել գործադրելուց մի վիճակաւոր առաջնորդի քմաց համաձայն:

Կարաբաղի թեմական դպրոցն էլ ունի կանոնադրութիւն, հաստատված Մատթէոս կաթողիկոսից 1853 թվին և սինոդից՝ 1861 թվին: Սինոդի 6 անդամների ստորագրութեան մէջ է և «Մակար արքեպիսկոպոսինը»:

Այդ կանոնադրութեան համաձայն գործել է հոգաբարձութիւնը մինչև 1888 թիւը, երբ Ղազարաղի թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Ալվազեանի և դպրոցի հոգաբարձութեան մէջ անհամաձայնութիւններ ծագեցին, որովհետև առաջնորդը ձգտում էր իրձատել հոգաբարձութեան իրաւունքները և սեմինարիայի եկամուտները բոլոր աղբիւրները գցել կոնսիստորիայի ձեռքը: Հոգաբարձութեանը ստիպված էին հեռանալ: Այն ժամանակ առաջնորդը փորձ փորձեց հոգաբարձութեան կէտը կազմել քահանայաներից, բայց այդ փորձը չաջողվեց և մի տարի դպրոցը մնաց առաջնորդի անմիջական իշխանութեան ներքոյ, այսինքն այն վիճակի մէջ, ինչպէս էր մինչև 60-ական թվականները: Երկուցիցները լատիներէն են այդ տարվայ խոսվածքները և դպրոցի քաջաբան լիճակը: Ժողովրդի անբաւականութեան վերջ առեց Մակար կաթողիկոսը, որը զինաներով ժողովրդի խնդիրներին թոյլ տուեց կատարել նոր հոգաբարձական ընտրութիւններ՝ Մատթէոս կաթողիկոսի տուած կանոնադրութեան համաձայն: 1889 թվ սեպտեմբերի սկզբում կալայա Ղարաբաղի թեմական դպրոցի հոգաբարձութեան ընտրութիւն, որ և շուտով հաստատվեց:

Կաթողիկոսի կոնգրուլ: Հասկանալի է, որ հանգուցեալ կաթողիկոսը, նշանակելով հոգաբարձութեան ընտրութիւն և հաստատելով ընտրածներին՝ ճանաչեց և նրանց իրաւունքները:

1892 թվի վերջում լրացաւ այդ հոգաբարձութեան ժամանակամիջոցը, որ, ըստ կանոնադրութեան՝ 3 տարի է: Պէտք էր նշանակել նոր ընտրութիւններ, որ և կարգադրեց Տեղակալ Երեմիա եպիսկոպոսը, սակայն Երեմիա առաջնորդը չը նշանակեց:

Այժմ հոգաբարձութիւն չը կայ և նրա փոխարէն դպրոցը կառավարվում է առաջնորդի ձեռքով, մինչդեռ համաձայն դպրոցի կանոնադրութեան (Պ. Ա. յօդ. 3 և 9):

«Դպրոցի կառավարութիւնը յանձնված է զբարոյի կառավարութեան ժողովին, որն որ կազմված է դպրոցի 5 հոգաբարձուներից և դպրոցի տեսչից, ընդ նախագահութեամբ Ղարաբաղու վիճակաւոր եպիսկոպոսի: Ամենայն ժողովի մէջ հոգաբարձուներից երկուսը անպատճառ պիտի լինեն, այնպէս որ ժողովը 3 անդամից պակաս կալանով չէ կարող»:

Հիմնվելով վերոյիշեալ հանգամանքների վրա, ժողովուրդը դիմել է էջմիածնին՝ Վեհափառ Կաթողիկոսին, խնդրելով կարգադրել ինչ որ հարկաւոր է և նշանակել նոր հոգաբարձական ընտրութիւն:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

«Կամուլազարդ տիկին» ներկայացումը, ղեկավարելով 2-ին, մի յաղթանակ էր տիկին Հրաչիայի տաղանդի համար: Մարգարիտ Գոսիէ մեզ յիշեցրեց, 80-ական թվականների հայոց բեմը, երբ տաղանդաւոր դերասանուհին, իր չորսնյակ խաղով դիմում էր հասարակութիւնը: Պահանջներ, որ տիկինը աւելի լաւ ներկայացներ՝ բարոյապէս ընկած, յետոյ վերածնված, և անարատ սիրով ողբերգված ու տանվող կնոջ դերը. — անարդարութիւն կը լինէր:

Տարբերաբար, նրա խաղի տպաւորութիւնը կիսով չափ թուլացաւ չորսնյակի պ. Պեննեմանի, որ յանդիման էր վերցնել Արմանի հրաշալի, և մի և նոյն ժամանակ պատասխանատու դերը: Եւ այն րաջանքին, կըր երկու սիրահարների տեսակցութիւնները պէտք է ցնցելին հասարակութիւնը, Պեննեմանիի ք զ ք զ ո ց ը, անբնական ծայր և տարօրինակ ձևերը յարուցանում էին միայն ծիծաղ և զրուանք:

Պեննեմանի, ինչպէս և ամեն մի տղէտ դերասան, կարող է ցանկանալ ամենամեծ դերեր կատարելու, բայց բեմի վրա կայ մի մարդ, որ դնում է իր veto-ն: Դա րեժիսորն է: Ո՞վ է հայոց բեմի այժման րեժիսորը, այդ հետաքրքիր չէ մեզ համար. հետաքրքիր միայն այն է, որ տեսնելով Արմանի դերը Պեննեմանիի ճանկերում, և ուրիշ այդ տեսակ աննկրելի սխալներ, մարդ կատարելապէս համոզվում է, որ րեժիսորը նոյնքան հասկացողութիւն ունի իր պաշտօնի մասին, որքան բերլական կենդանին նարնջի մասին: ձիշդ որ՝ Бѣда, коль пироги начнетъ печь сапожникъ...

Ջարմանում ենք, որ հայոց բեմի այժման ղեկավարները, որոնք հերոսաբար ահագին զէֆիգիա են վերցրել իրանց վրա, չեն հոգում մի մարդավարի րեժիսորի մասին:

Այդ երկուսից միւս խաղացողները թէ կանայք և թէ տղամարդիկ, թէ և փոքր դերերում, նպատակեցին խաղի ամբողջութեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հետագրում են էջմիածնից ղեկավարելի 3-ից հետեւալը. «Երեկ ճանապարհ ընկան զէպիթուրի Գրիգոր եպիսկոպոս Աղուստան և Սահակ վարդապետ Ալվատեան»:

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում հաղորդեցինք, որ թիւրքաց Հայաստանի Սասուն գաւառում տեղի է ունեցել մի ընդհարում հայերի և թիւրքերի մէջ: Մեզ հասած ժամանակը տեղեկութիւններից երևում է, որ հայերը բացարձակ յաղթարարել են, թէ քանի որ իրանց հետ այդպէս անարդար կերպով են վարվում, իրանք մինչև վերջին չունչը կը դիմագրեն և ան

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 դեկտեմբերի: Ներքին գործերի մինիստրը «Новое Время» լրագրի խմբագրությանը խիստ նկատողություն արած նրա յանդուգուն և որ և է հիմքից դուրս պախարակիչ յողուածի համար ծովային ցենզի մասին: Երէկ Պետերբուրգի պաշտօնական թերթը պատուեց մի ճաշով Ֆրանսիական դեսպան կոմս Մոնտեմեյլին, ազնուականների ժողովարանում: Գահինը զարդարված էր տրոպիկական բոյսերով և ծաղիկներով: Կոմս Մոնտեմեյլին առաջ դրված մընիւսի վրա նկարված էին ազգային շորերով երկու կանայք, որոնք ներկայացնում էին Ֆրանսիան և Ռուսաստանը: Հաշին ներկայ էին պետական խորհրդի անդամներ, մինիստրներ, պետապետներ, բարձրագոյն պալատի անդամներ: Կոմս Մոնտեմեյլին կրում էր Ալեքսանդր Նեվսկոյի չքանչաւ, որը նոր էր չորհրդած նրան:

ՊԱՐԻՋ, 2 դեկտեմբերի: Յայտնի աշխարհագիր էրէկէ Ռէկլիւի եղբորորդու՝ Խոմենէր Պօլ Ռէկլիւի մօտ գտնվել է մի գրադրութիւն, որից երևում է, որ Պօլ Ռէկլիւ գործող անարկիստ է և անդադար հաղորդակցութիւն ունի զանազան պետութիւնների անարկիստների հետ: Պատրաստվում են օտարապետակ անարկիստների կալանաւորումներ: Բոլոր մինիստրութիւնների մէջ առանձին նախագրողութիւն է առնված պայքիւնների դէմ: Ռիօ-դը-ժանէյրօ պաշարված է և չօգնաւորը այնտեղ մտնել չեն կարող: Գործերը կանգ են առել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 դեկտեմբերի: Պետական խորհուրդը հաւանութիւն տուեց այն նախագծին, որով թեթեւացում են գիւղական հասարակութիւնների կողմից վճարվող ապուրիկները, որ մնացել են

նրանց վրա կալուածատերերից հողեր յետ գնելու ժամանակ: Մտադրութիւն կայ փոխել ժառանգական գոյքերից վերցվող հարկերի վերաբերեալ օրէնքը:

ԲԵՐԼԻՆ, 3 դեկտեմբերի: Ռէյխստագն ընդունեց առևտրական դաշնագիրը Սպանիայի հետ: Կայարիվի յայտարարեց, որ գիւղական տնտեսութիւնը պէտք է մի յայտնի չափով վնաս կրի ուսուցիչական դաշնագրի պատճառով, որովհետեւ երկիրը, որի գլխաւոր արդիւնաւանութեան աւարկան հացն է, պէտք է մի քանի դիշուսներ ստանայ այդ կողմից: Այսօր Լէյպցիգի կայսերական դատարանում սկսվեց Ֆրանսիական այն օֆիցէրների դործի քննութիւնը, որոնք 1893 թուի օգոստոսին պարագում էին Կիլում և այլ տեղերում, պետական պաշտպանութեան տեսակէտից արգելված ֆօտօգրաֆիական պատկերներ հանելով և այդ լուսանկարները ուղարկում էին Ֆրանսիական կառավարութեանը: Մեղադրվածները յայտարարեցին, թէ որովհետեւ գերմանական նաւատորմի զարգանալը շատ անհանգստութիւն էր պատճառում Ֆրանսիական ծովային շրջաններին, այդ պատճառով իրանք, համոզվելով որ քիչ ժամօթութիւն ունեն գերմանական ծովային ամրութիւնների հետ, ցանկանում էին իրանց հաշով աւելի մօտ ծանօթանալ դրանց հետ:

ՎԻԵՆԱ, 3 դեկտեմբերի: Պատգամաւորների ժողովը ընդունեց մի օրինագիծ՝ արտակարգ ցինւորական հսկողութիւն նշանակելու Պրագայում:

Խմբագիր՝ ԱԼԷՔԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

„ԱՆՈՒՍ“ Թերթերի ժամանակաւոր խմբագիր պ. Վ. Սուլթանեանցի նոյն Թերթերի խմբագրութեան պաշտօնից հրաժարվելու պատճառով, նրանց հրատարակութիւնը նոյնթերթի 15-ից դադարեցաւ ժամանակաւորապէս. այժմ նրանց իսկական խմբագիր և հրատարակիչ պ. Տիգրան Նազարեանցը խնդրում է յայտարարել թէ՛ արտասահմանից վերադառնալով մինչև դեկտեմբերի 15-ը՝ թէ՛ յայժմ լոյս չը տեսած Թերթերը կը լրացնէ անթերի և թէ՛ այնուհետև ևս կը շարունակէ նոյն Թերթերի հրատարակութիւնը աւելի շքեղ դրութեամբ և լաւագոյն ոյժերով:

(№ 16) 1—3

Լոյս տեսաւ և վաճառվում է „Կենտրոնական գրավաճառանոցում“.

Հ Ե Շ Տ Մ Ի Զ Ո Յ
Ռուսերէն լեզուով կարդալ, գրել և խօսել սովորելու հայոց լեզուի օգնութեամբ:
(САМОУЧИТЕЛЬ РУССКАГО ЯЗЫКА). Աշխատասիրից վաղեանց:

Գինն է 30 կօպ. ճանապարհածախսով 40 կօպ:

Հինգ օրինակից աւելի գնողը ճանապարհածախս չէ վճարում: Այս դասագրքով կարող են առանց ուրիշ օգնութեան, ռուսերէն սովորել նրանք, որոնք քիչ շատ հայերէն կարդալ գիտեն:

Օտարաբաղադրացիք դիմում են՝ Тифлисъ, Овакиму Айвазянцу. Чугуреты, Гончар. ул. № 44. 2—3

Լ յ յ տ ե ս ա լ
ՐԱՖԱԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ
Ը Ն Տ Ի Ր Ե Ր Կ Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր Ը
Խմբագրութեամբ Գր. Խալաթեանի

Երկու հատոր. հեղինակի երկու պատկերով, ինքնագրով, կենսագրական նկարագրով և Նոր-Նախիջևանի համառօտ բառգրքով: Հատոր Ա. ոտանաւորներ. Հատոր Բ. արձակ գրուածներ:

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ ՎԱՌՎԱՌԷ ՔԱՆԱՆԵԱՆ
Յօգուտ րաֆայէլ Պատկանեանի ընտանիքի:
Գինը 2 հատորի—4 ռուբլի: Գինը և է ՍՕՍԿՈՒԱ (Պահեստ հրատարակութեան) Լազարեան ձեմարան, հրատարակչին. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գասպար Եաղուբեանին. ԹԻՖԼԻՍ ֆիլիպոս Վարդանեանին. ԳԱՆՁԱԿ՝ Բժիշկ Մնացական Թեմուրեանին. ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԱՆ. Խաչատուր Չալոսեանին. ՇՈՒՇԻ ԼԵՆ Սարգսեանցին:

(№ 16 շ. հ.) 1—6

Դուրս եկաւ մամուլի տակից Մօսկվայի մի խումբ երիտասարդների հրատարակութեամբ „ՃՈՂՈՎԱԾՈՒ“ ՅՕԳՈՒՑ ՍՈՎԵՏԱՆԵՐԻ: Ժողովածուի գինը, ճանապարհածախսով միասին, ՄԻ ՐՈՒԲԼԻ է: Գինը ցանկացողները թող դիմեն հետեւեալ հասցեով. Մօսկվա, Тверская ул. Номера Фальцъ-Фейнъ, № 192, Ерванду Тагіаносянцъ, կամ Тифлисъ, Центральная Книжная Торговля. 3—5

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Հ. Յ. Օ Ր Ի Է Լ Ի
Սօլջակիայա փողոց, սեփական տանը №15—16
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:
(№ 145) 108—150

Նոյնթերթի 1-ից կը ստացվի ՊԱՏԵՐԲՈՒՐԳ ՍԻՍԵՄՈՎ ՊԱՏԲԱՍԱՍԻ ԲՐՈՒՍՍՍԻ ԲՈՒՌՈՒՄ ՍՊԵՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն յայտնի է ամբողջ Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և առաւած առատ բերքով: Սերմը կը ստացվի ուղղակի յայտնի „Եկօնօրտես“ ֆիրմայից: Գնել ցանկացողները կարող են դիմել ԵՂԲ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՆԵՐԻՆ, Բաթումում, Թիֆլիսում, Բազումում, Նուխում Աղա-Մուսա Մահմէդովին.
Այս հասցեով. Բր. Мнацаканянцъ, Тифлисъ, կամ Баку, կամ Батумъ.
(Ե. շ.) 6—32

ՊԵՏՐՈՎՍԿ ՔԱՂԱՔՈՒՄ
Մեր սեփական գործերի պատճառով մնալու եմ մշտապէս. ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ Լ կատարում եմ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՆԵՐԻ՝ ստանալու, վաճառելու, կամ ճանապարհ հելու Մօսկվա և Ռուսաստանի բոլոր քաղաքները նոյնպէս ծովով Անդրկասպեան երկիրը ու Պարսից նաւահանգիստները:
Մեր հասցէն՝ Петровскъ, Александръ Григорьевичу Аббянцу.
(ՁԵ 7) ԱԼԷՔԱՆԴՐ ԱՐԵԱՆՅ 3—6

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՇԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Դեղերի, մորթի գեղեցկացնող և հոտաւտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կովկասում, Վորոնեժի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ:
(№ 67) 45—100 (Ե. շ.)

ԼԱԶԱՐԵԱՆ ԶԵՄԵՐԱՆ ԱՐԵՆԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՅ, ՄՕՍԿՎԱ
Հ ե մ ար ա ն ի վ ար չ ու թ իւ ը ու ը ի վ ա ճ ա ու ե լ ու .
ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ

Հետեւեալ սակաւաթիւ հեղինակութիւններն ու հրատարակութիւնները.

- 1) Վարդանայ Բարձրերդեղեղ Պատմութիւն Տիգրեական, Մօսկվա, 1861, ա. տ. 2, ր. 50
- 2) Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիւնեայի, 1861 ա. տ. 3, —
- 3) Միլիթարայ Արեւմտեան Պատմութիւն Հայոց, 1860, ա. տ. —, 1, —
- 4) Всеобщая Исторія Вардана Великаго (XIII в.), переводъ съ армянскаго, съ объясненіями и приложеніями, 1861. — 4 " —
- 5) Всеобщая Исторія Степаноса Таронскаго Асوخика по прозванію (XI в.) пер. съ армянскаго, съ объясненіями и приложеніями, 1864. — 4 " —
- 6) Синодальное слово Нерсеса Ламбронскаго (XII в.), пер. съ арм. 1864. 2 " —
- 7) Шаракантъ (Շարական) богослужебные каноны и пѣсни армянской Восточной Церкви. Полный переводъ. 1879 (մնացել է միայն մի քանի օրինակ) 6 " —
- 8) Армянскія надписи въ Карсѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго, текстъ и переводъ 1881. — 1 " 50
- 9) Очеркъ Исторіи Армянской Восточной Церкви, 1864. — 1 " 65
- 10) Очеркъ религіи языческихъ армянъ (изслѣдованіе) 1864. — 1 " 50
- 11) Отвѣтъ на замѣчаніи г. Патканова, 1874. — 1 " 65
- 12) Моисей Хоренскій и древній эпосъ армянскій (изслѣдованіе) 1881. 1 " —
- 13) Династическій списокъ Хайкидовъ (изслѣдованіе)
- 14) Сказаніе о Романѣ и Давидѣ (Борисѣ и Глѣбѣ) по Арм. Четой-Минеямъ (пер. съ армянскаго). — " 75
- 15) Сказаніи о Свв. Фаддѣ и Варооломѣ апостолахъ Арменіи (пер. съ армянскаго) — " 75

Գրքերի գնելը հաշված են ճանապարհածախսով հանդերձ: Այս գրքերից գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել իրանց պատուէրներով ձեմարանի վարչութեան պապիսի հասցեով.
Въ Правленіе Лазаревскаго Института восточныхъ языковъ (Москва).
Նոյն տեղում վաճառվում է նոր լոյս տեսած
„ИСТОРИЯ АРМЕНИИ МОИСЕЯ ХОРЕНСКАГО“
Новый переводъ М. Эмина (съ примѣчаніями и приложеніями), Москва, 1893.—Цѣна 2 р., съ пересылкою 2 р. 25 к. (2) 3—4

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА
HOTEL NIEMIESKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՅ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված, նոմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոմէրների գինը 50 կօպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բէստօրան, տեխնիք, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 50—130 (շ.)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշաւարու-թիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսուցմանսիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՆԵՐԻ
Տօկոսների լիակատար աղետակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 1⁰/օ-ից մինչև 12⁰/օ. վաճառվում է եղբարց Ծովանօվների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաբաղադրացիք դիմում են վերջին հասցեով՝ С. П. Мануэлянцу.
Գինն է 1 ռուբլի: Փօստի ծախս 21 կ. Գրավաճառներին դիմում կը լինի 134—154
(9—№ 95)

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԹԻՒՆԻ
„Ольфакториумъ Нудилинъ“
М. А. ЖИРМУНСКАГО.
բժշկական դեպարտամենտից թոյլ արված
ՕԼԳԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ցախվում է 40 կօպէկով
Դեղադո ծական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մեջ թիֆլիսում
№ 128 (91 թ.) 6—40